

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ

Հռոմ-Վատիկան

Ձերդ Սրբություն,

Մարտ ամսին կարճ այցելությամբ գտնվելով Փարիզ, ընդունեցի այցելությունը Վենետիկի Մխիթարյան հայկական միաբանության ներկայացուցիչների, որոնք ինձ հանձնեցին բովանդակալից կեկուցագիրը միաբանության ընդհանուր Տեղակալի, ի մասին Ս. Ղազար վանքի արդի տնտեսական կացության:

Այդ կեկուցագրից տեղեկացա, որ Մխիթարյան հայրերը վերջին տարիներին կոհ են գնացել որոշ առևտրական ընկերությունների անակնիվ ֆինանսական գործարքների, որի հետևանքով այժմ վաճառքի են հանված վանքի բոլոր կալվածները: Եվ ավելին, վտանգի տակ են գտնվում նաև վանքում պահպանվող հայ եկեղեցական արվեստի արժեքները՝ հայկական միջնադարյան ձեռագրեր, հնատիպ գրքեր, գեղարվեստական նկարներ, եկեղեցական սրբազան սպասներ, գորգեր և այլ արժեքներ, որոնք հայ ազգի համար սրբական մասունքներ են Ս. Ղազար վանքին հանձնված ու այնտեղ ապահով պահպանված վերջին ավելի քան երկու դարերի ընթացքում:

Ինձ համար և համայն հայ ժողովրդի համար որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, անսպասելի մի աղետ է այս կացությունը և ծանր հարված հայ ազգին ու նրա կրոնական մշակույթին:

Ինձ ներկայացնող Մխիթարյան հայրերը հայտնեցին նաև, թե դիմել են իտալական պատկան իշխանություններին, հուսալով, որ նրանք օգնության ձեռք պիտի երկարեն փրկելու համար Ս. Ղազար կղզու բացառիկ արժեք ներկայացնող այս գանձատունը և միաբանության վարկը:

Տեղյակ դարձա նաև, որ Մխիթարյան հայրերը իրենց պատահած այս դրժբախտության մասին, բնական է, կեկուցել են նաև Ձերդ Սրբության, քանի որ նրանք գտնվում են Հռոմի եկեղեցու բարձր հովանավորության ու օրհնության ներքև:

Սույն գրով, հանուն համայն հայ հավատացյալ ժողովրդի և հատկապես հանուն հայ հոգևորականության ու մտավորականության, կանխապես շնորհակալ եմ Ձեր հայրական հոգատար վերաբերմունքի համար, վստահ լինելով որ Ձեր մեծ հեղինակությամբ պիտի տնօրինեք անհրաժեշտը, որպեսզի Ձեր

Սուրբ Աթոռի կառավարչությունը ապդու միջոցառումներով, ցրվումից և կորըստից փրկի Մխիթարյան պատմական վանքի հոգևոր ու նյութական հարստությունները:

Երախտապարտ պիտի մնամ Ձերդ Սրբության, եթե իմ սույն գիրը Ձեր հոգածու ուշադրության առարկան դառնա մոտ ապագային, քանի ուշ չէ դեռևս:

Մնամ հարգալից եղբայրական սիրով ի Քրիստոս, մաղթելով Ձեզ մշտանորոգ հոգևոր եռանդ, մեր օրերի փոթորկալի աշխարհում շարունակելու Ձեր խաղաղարար առաքելությունը:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
21 մարտ 1985 թ.

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Շնորհակալություն եմ հայտնում 21 մարտ 1985 թվակիր Ձեր նամակի համար, որը վերաբերում էր Վենետիկի Ս. Ղազար վանքի կացությանը, ինչպես նաև այն հետաքրքրության համար, որ Դուք ցուցաբերում եք այդ արժանավոր միաբանության նկատմամբ:

Ուզում եմ վստահեցնել, որ ես մեծագույն ուշադրությամբ հետևում եմ այդ գործին, որովհետև քաջ գիտակցում եմ, թե ինչպիսի անգնահատելի արժեք են ներկայացնում Ս. Ղազար վանքում ի պահ դրված գանձերը՝ հայ հոգևոր մշակույթի և ամբողջ Հայ Եկեղեցու համար: Կանոնավորապես գործի ընթացքին տեղյակ լինելու և ապահովելու համար Սուրբ Աթոռի օգնությունը Մխիթարյան միաբանությանը, ես հանձնարարեցի կարդինալ Ջուլեպպե Կապրիոյին՝ ուղղակիորեն հետևել այդ ամբողջ հարցին: Հույս ունեմ, որ այսպիսով ու նաև Մխիթարյան հայրերի բոլոր բարեկամների աջակցությամբ, մենք կկարողանանք գոհացուցիչ մի լուծում գտնել:

Ես ուրախ եմ օգտվելու այս առիթից՝ կրկին հավաստիացնելու Ձերդ Սրբությանը, որ մնում եմ աղոթող՝ Ձեզ և Ձեր ամբողջ ժողովրդի համար, և հայտնելու Ձեզ իմ եղբայրական սիրո զգացումներն ի Քրիստոս:

ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ

Վատիկան,
27 մայիս 1985 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ամանորի և Քրիստոսի հրաշափառ Ծննդյան նվիրական առիթներով ընդունեցեք Մխիթարյան հայրերու ջերմագին շնորհավորանքը, երջանիկ արևշատ տարիներու և շինարար բաղում գործոց մաղթանոք ի բարօրություն համորեն մեր սիրելի ազգին:

Ձերդ Վեհափառություն,

Օրհնությամբ հաճեցեք վորավիգ կանգնիլ Փարիզի ՍԻՔԱՄ նվիրյալ կոչին* և ձեռնարկին՝ քաջալերելով ազգասեր բարերարներ ի հաստատություն սուրբ Ղազարի:

Ամենախորին մեծարանոք և շնորհակալությամբ՝

ՀԱՅՐ ԲԱՐՍԵՂ ՎՐԴ. ՉԵՓԻՃՅԱՆ
Ընդհանրական աթոռակալ Մխիթարյան միաբանության

24 դեկտեմբերի 1985 թ.

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Մխիթարյան Վարժարանների Միջազգային Կոմիտեի անունից թույլ տվեք նորից դիմել Ձեզ. մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Ձեզ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի մոտ Ձեր միջամտության համար, որպես հետևանք այն տեսակցության, որ Դուք բարեհաճեցիք ունենալ մեզ հետ Փարիզում Ձեր կեցության օրերին:

Պատիվն ունենք հայտնելու Ձեզ ի գիտություն, որ մեր կանանց բանակցությունները վերջապես հանգեցին դրական արդյունքի. գոյացավ համաձայնություն վճարելու սկզբնապես պահանջված գումարի մեկ երրորդը:

Այժմ ժամանակը հարմար ենք համարում ձեռնարկելու համազգային մի հանգանակության, որի համար Ձերդ Սրբությունը տրամադրություն էր հայտնել մի կոչ հրապարակելու: Խնդրում ենք Ձեզ, որ բարեհաճեք հրապարակել այդ կոչը: Մենք դիմել ենք նաև գերաշնորհ Տ. Գյուտ եպիսկոպոսին, որ մեր սույն խնդրանքը բանավոր փոխանցի Ձեզ: Ավելի քան որևէ մեկը Ձերդ Սրբությունը կարող է գնահատել այն էական նպաստը, որ շուրջ 300 տարուց ի վեր բերում է մեծ Մխիթարի հիմնած միաբանությունը մեր մշակույթին:

Հանուն մեր կոմիտեի հայտնում եմ Ձերդ Սրբությանը իմ խոր երախտագիտությունը այն վստահությամբ, որ Ձեր առաջիկա կոչը վորավիգ կլինի մեզ՝ հաջողությամբ պսակելու մեր ջանքերը:

---

* Այս առիթով Մխիթարյան Վարժարանների Միջազգային Կոմիտեն կոչ էր հղել համայն հայությանը՝ նյութապես օժանդակելու Վենետիկի Մխիթարյան միաբանությանը:



Խորին հարգանքներով ի դիմաց Մխիթարյան Վարժարանների Միջազգային Կոմիտեի:

Նախագահ՝

ՎԱՀԵ ՃԱԶՄԱՏԱՐՅԱՆ

Փարիզ, 25 դեկտեմբերի 1985 թ.

ՀՈԳԵՇՆՈՐՀ ԱԹՈՌԱԿԱԼ ԲԱՐՍԵՂ ՎՐԴ. ՉԵՓԻՃՅԱՆ
ՀԱՅ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ, ՎԵՆԵՏԻԿ, ԻՏԱԼԻԱ

Սիրով ընդառաջելով Ձեր դիմումին, որոշեցինք հրապարակել կոչ-հայտարարություն համայն հայության՝ հօգուտ Միաբանությանդ նյութական կացության վերականգնման: Այս առթիվ Մայր Աթոռս տրամադրում է քսանհինգ հազար դոլլար: Կհաջորդե հայտարարությունը: Հաճեցեք Մեզ տեղեկացնել որտեղ փոխանցենք վերոհիշյալ գումարը: Աստված ձեզ օգնական:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

26 դեկտեմբերի 1985 թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռիս Դիվանը լիապորված է հայտարարելու, թե Գերագույն Հոգևոր Խորհուրդս, նախագահությամբ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի, իր 24 դեկտեմբերի նիստում, ընդառաջելով Սբ. Ղազարի Մխիթարյան ուխտի աթոռակալ Հայր Բարսեղ վարդապետ Չեփիճյանի ու Մխիթարյան Վարժարանների Միջազգային Կոմիտեի՝ Սբ. Էջմիածնին հղած դիմումներին, որոշեց Մայր Աթոռիս համեստ միջոցներից քսանևհինգ հազար դոլլար տրամադրել Մխիթարյան միաբանության օգտին, վերջերս ստեղծված նրա ծանր կացության առթիվ:

Վերոհիշյալ գումարը սիրով տրամադրելով, Վեհափառ Հայրապետը և Գերագույն Հոգևոր Խորհուրդը հույս են հայտնում, որ համայն հայությունը կընդառաջի Մխիթարյան Վարժարանների Միջազգային Կոմիտեի կոչին, որպեսզի համազգային ճիգերով ու բարերար անձանց առատաձեռնությամբ հնարավոր դառնա փրկել Սբ. Ղազարում պահպանվող ազգապատկան հոգևոր մշակութային գանձերը և այսպիսով Մխիթարյան պատմական հաստատությունը դուրս բերել ստեղծված ծանր կացությունից:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Սուրբ Էջմիածին,
27 դեկտեմբեր 1985 թ.